

July

286

1031.

~~Yang Mocong in men~~

~~Dorset Comb~~

2000

Հրատարակ. Բ. Հ. Կովկասուրական Միութեան
Հրատարակչական Մասնակիողի—№ 16

ԴՐԱՆԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԵՐԸ

Լուս
286

№ 4

1031

ահ

ՍԱՀԱԿ ԵՒ

ՄԵՍՐՈՊ



Գ. ՓԱՓԱՉԵԱՆ



2091

38524 ա. հ.

Տարբառի նորակայության Հ Ա վայրացու
Ո Վ մ պահանջման նորագույնությունը:

առաջնորդության մասին

ՎԾՈՒ Վ Ա

ՀԵ

Ա Բ Ա Մ Ս Ա Ս

Ր Ո Ւ Գ Ո Ւ



286-2003

(6026)
39)

28-286

2142-69
8

բանության մասին մատուցությունների
պահանջման նորագույնությունը:
Կամաց այդ նոր կրօնը, երկար հալածանքներ
կրելուց յետոյ յաղթական, գրաւում էր բարձր
գասակարգի համակրութիւնը և մտնում էր
արքունիք:

Տրդատ թագաւորի օրով արևմուտքից
եկած այդ նոր կրօնը, երկար հալածանքներ
կրելուց յետոյ յաղթական, գրաւում էր բարձր
գասակարգի համակրութիւնը և մտնում էր
արքունիք:

Եղան իհարկէ զօրեղ դիմադրութիւններ և
արիւնահեղ կորուններ, սակայն թագաւորական
«խիստ հրամաններն» ու Գրիգոր Լուսաւորչի
կարուկ, արագ գործունեալութիւնը վերացրին
երկրից հեթանոսական կրօնի՝ գոնէ ակներե
պաշտամունքները:

Ասենք՝ շատ և շատ յետոյ էլ քրիստոնեայ
կրօնաւորութիւնը չը գագարեցրեց հին կրօնը
արմատախիլ անելու իր ջանքերը, որովհետեւ
մնում էին դեռ յամառ հաւատացողներ—բայց
և այնպէս, չորրորդ դարի երկրորդ կէսիցն
սկսած երկրի օրէնքները, ժողովրդի բարոյա-
կան հասկացողութիւններն ու բարքերը սկսեցին

ձեւառուել Սուրբ Գրքերի և մանաւանդ նրանց
մեկնաբանող կրօնաւորների ցուցմունքներով:

Քրիստոնէութեան հետ երկիր էին մանում
ուրեմն նոր ըմբռնումներ, կեամսքի և ապրելու
նոր ձգտումներ, այն է՝ մարմնի վերաբերմամբ
խորին արհամարհանք, իսկ հոգու փրկութեան
խնդրում շատ նախանձախնդիր:

Դրա հետ միասին ոչ միայն վերանում էին,
այլ և խստ հալածանքի էին ենթարկում
բնութեան, սիրոյ և պեղեցկութեան աստած-
ների պաշտամունքը, որ իր ծէսերն ու տօներն
ունէր Հայաստանում և ներշնչում էր ժողովրդին
կեանքը վայելելու հաճոյքներ և երջանիկ օրերի
իդէալներ:

Այդ ամենին փոխարինում էին հանգերձեալ
կեանքի համար երազանք և դէպի այս՝ աշխար-
հային «անցողական» վայելքները զգւանք տա-
ծելու առաքինութիւններ:

Այսուհետեւ հայ միտքը գործել սկսեց մի
միակ ուղղութեամբ—բացառապէս կրօնական:

Միայն այդ չէր չորրորդ գարի յեղաշրջման
արդիւնքը Հայաստանում:

Քրիստոնէութեան մուտքը առաջ էր բերել
մի ուրիշ հանգամանք էլ:

Հէնց սկզբից, Տրդատ թագաւորի օրով,
երբ նոր կրօնը պաշտօնապէս ընդունել էր
երկրում և Քրիստու կուսաւորիչը հիմնում էր

քաղմաթիւ կրօնական հաստատութիւններ, եկե-
ղեցին աէր էր գառնում ընդարձակ հողերի,
գիւղերի և նոյն իսկ ամբողջ գաւառների:

Թագաւորներից ու մեծամեծներից նւիր-
ւած և կամ ուրիշ կերպ ձեռք բերւած կալւած-
ները այնքան շատացան հետզիետէ, որ չորրորդ
գարի երկրորդ կէսին, հայ եկեղեցին նմանում
էր մի մեծ աւատական իշխան-կալւածատէրի և
շատ աւելի զօրեղ էր, քան որ և է նախարարա-
կան տուն:

Եկեղեցին այդպիսով ձեռք էր բերել այն
մեծ ոյժը, որ կամաց-կամաց ամենազգեցիկը
պիտի գարձնէր նրան երկրի մէջ։ Կալւածատի-
բական այդ քաղաքականութիւնը իր փառքի
գագաթնակէտին հասաւ մանաւանդ կուսաւորչի
յաջորդներից՝ ներսէս Մեծի օրով։

Բայց տնտեսական ոյժից՝ գուցէ հէնց այդ
իսկ ոյժի շնորհիւ—եկեղեցին մարմնական իշխա-
նութեան մէջ էլ ձեռք էր բերել թագաւորին
հաւասար ազգեցութիւն։

Կաթողիկոսները գրեթէ գահակիցներ, եր-
բեմն մինչև անգամ բացարձակ իշխողներ էին
երկրին։

Այդպիսի գրութիւնը երկար տևել չէր կա-
րող, որովհետեւ յաճախ էր պատահում, որ եկե-
ղեցու շահերը հակադիր լինէին մարմնական
իշխանութեան շահերին։

Երկու տիրապետող ոյժերի ընդհարումները չուշացան հրապարակ ենելու, մանաւանդ եք երկրի քաղաքական կեանքի հանդամանքներն էլ տարբեր ճանապարհների վրայ դրին նրանցից իւրաքանչիւրին:

Լուսաւորչի և Տրդատի մահւանից յետոյ, Հայաստանի համար առաջ եկաւ կամ քրիստոնեայ Յունաստանի և կամ հեթանոս, բայց աւելի զօրեղ Պարսկաստանի հովանաւորութեան տակ մանելու գժւարին հարցը:

Կրօնաւորութիւնը, նոյն իսկ Լուսաւորչիցն սկսած, բոնեց Յունաստանի կողմը, որպէս քրիստոնեայ պետութեան:

Այդ հանդամանքը պատճառ եղաւ եկեղեցու և մարմնական իշխանութեան մէջ տեղի ունեցող գժտութիւնների, որոնք գնալով այնքան մեծացան, որ հայոց թագաւորները կը արական կերպով կրօնաւորների ոտնձգութիւնները զսպելու հարկի մէջ գտնեցին:

Ամենից առաջ նրանք ջանացին ջլատել նրանց տնտեսական ոյժը, Լուսաւորչի ժամանակւանից իւրաքանչիւր եկեղեցի ունէր եօթնական կալւած, այլ և երկրի արդիւնքներից քարւող տասանորդներ, Այդ եկամուտովը ապրում էր ոչ միայն մի քաղմամարդ կղեր, այլ և կրօնաւորների պարապ, անդործ ազգականների և մերձաւորների ամբողջ խմբեր:

Պապ թագաւորը խեց նախ կալւածներից երեքը, յետոյ ջնջեց տասանորդի գմարումը և իւրաքանչիւր եկեղեցու համար, եկեղեցու եկամուտով ապրող՝ թողեց միայն մի հատ քահանայ և մի սարկաւագ:

Այսուհետև նա արագ վճռականութեամբ փակեց և ջնջեց այն բոլոր ձրիակերական հիմնարկութիւնները—վանք, աղքատանոց, կուսանոց և այլն—որոնցով լիքն էր երկիրը, շնորհիւ Ներսէս Մեծի:

Եկեղեցու իրաւունքների և տպիցութեան սահմանափակումի համար կատարւող այդ յանդուգն ձեռնարկութիւնները չը մնացին սակայն անպատիժ:

Պապ թագաւորն ամբաստանւեց որպէս պարսից կողմը բոնող, գաւաճանութեամբ կանչեց յոյների մօտ և կայսրի հրամանով վատաքար սպանւեց:

Քաղաքական հանդամանքները սակայն բարդում էին հետզիւտէ և շուտով երկիրը պիտի կորցնէր իր անկախութիւնը:

Բնդունելով քրիստոնէութիւնը, հայ աղնաւականութիւնը կամաց-կամաց, իսկ կրօնաւորութիւնը հենց սկզբից՝ սկսեցին մօտենալ յոյներին և աշխատել կտրելու պարսիկների հետ ունեցած որ և է կապ Յունական աղքեցութիւնը Հայաստանում զօրեղացաւ մանաւանդ այն ժա-

մանակ, երբ կայսրութիւնն էլ ուժեղ էր: Բացի դպանից, հայ ժողովուրդը իր նոր կրօնով և մտաւոր կեանքի բարւոքման ցանկութիւններով՝ հակում էր դէպի այդ շատ աւելի քաղաքակարիթ աշխարհը: Եկեղեցիների մէջ ասորերէնի հետ յունարէնն էլ ոկտած մտնել. արքունիքում, ազնւականութեան մէջ, յունարէն լեզուն սովորական դարձաւ և քիչ յետոյ ընդհանրացաւ Հայաստանում:

Այդ բոլորը չէին խուսափում պարսից թագաւորների, մանաւանդ խորամանկ Շապուհի աշջերից: Նրանք շատ լաւ նկատում էին, որ Հայաստանը դուրս էր ենում Պարսկաստանի ձանկերից և գուցէ մի գեղեցիկ օր էլ հայերը միաբանած կրօնակից յոյների հետ, լիովին հանէին երկիրը պարսկական իշխանութիւնից:

Վաղուց ի վեր այդ երկիրը արդէն երկու մասի բաժանւածի նման էր. որովհետեւ նրա մի մեծ մասը Պարսկաստանին էր հարկատու, նրա թերի տակ էր մտել, նրա լեզու, կրօնի և բարքերի ազդեցութեանն էր ենթարկւել և հեռու չէր ինքնուրոյնութեան յետին մնացորդներն էլ մի օր բոլորովին կորցնելուց: Միւս փոքր, արևմտեան մասը՝ նոյն վիճակի մէջն էր Յունաստանի ձեռքում:

Երկու տէրութիւնները ամեն միջոց գործ էին գնում, որ միմեանց ձեռքից խլեն համեղ

պատառները:

Այդ էր իսկապէս բուն պատճառը այն աղետաբեր անցըերի, որոնք տեղի ունեցան IV դարից սկսած միքանի գար շարունակ և երկիրը յաջորդաբար ոտնակոխ եղաւ թէ արտաքին ոսովիների կոփւներից և թէ ներքին, երկու կուսակցութեան բաժանւած նախարարական ցեղերի ընդհարումներից:

Մեհրուժան Արծրունու արածները, օրինակ, ով չը գիտէ: Այդ դաւաճան հայ իշխանը ուրացաւ իր կրօնը, կամեցաւ իր ազգակիցներին էլ պարսկական կրօնին գարձնել և հայոց թագաւոր լինելու հեռանկարով՝ վայրենի արշաւանքներ բերաւ իր հայրենիքը քարուքանդ անելու. արիւնի հեղեղներ վազեցրեց, ինչ գիրք կար, վաւեց և յունական ու քրիստոնէական ինչ քաղաքակրթութիւն որ մտել էր, ջնջել աշխատեց: Բայց ուժեղ յոյների ուղարկած օկնութեամբ՝ յունական կուսակցութեան պատկանող հայերը ջարգեցին նրա բերած պարսկական բանակը:

Սակայն միթէ միայն Մեհրուժանը եղաւ այդպէս աւերիչ իր հայրենիքի. չէ որ հայ ազնւականութիւնը շատ ուրիշ դաւաճաններ էլ տւաւ, որոնք գործիք դարձան պարսկական կառավարութեանը և իրենց հայրենիքը սպանդանոց շինեցին, կամ իրար դէմ ելած, ոտնասաակ

տւին անօգնական ժողովրդին, ջարդեցին ու տանջեցին նրանց՝ իրարից վրէժ հանելու մտադրութեամբ։ Կ

Պարսից կողմնակիցները այդ միջոցին այնքան շատացան (որովհետև Պարսկաստանը աւելի էր ուժեղանում Յունաստանից), որ երկրին սպառնում էին բռնի կրօնափոխութեան նորանոր հալածանքներ, արիւնի մէջ ծնող մի նոր հաւատք ևս. սրով ու հրով ներս խծկւելու եկող, նոր վարք ու բարք, եթէ յոյները ժամանակին իրենց պետութեան համար ներկայացող մեծ վտանգը չըմբռնէին ու պաշտպանութեան և օգնութեան չը համնէին հայ կրօնաւորութեան և իրենց կողմնակից ազնւականութեանը։

Այդ բոլոր տակնուվրայութիւնը տեղի էր ունենում IV դարի երկրորդ կէսին և կարող էր գեռ երկար էլ տեսել։ Սակայն երկու տէրութիւնները միմեանց ձեռքից փոխնիփոխ Հայաստանը խլելուց ձանձրացան կարծես և 384 թւին համաձայնութեան եկան մեր աշխարհը փաստօրէն բաժանելու իրար մէջ։

Բաժանման շնորհիւ, Հայաստանի մեծ, բարեբեր մասը (Արարատեան նահանգը մանաւանդ) բոլորովին դարձաւ պարսիկների սեպհականութիւնը և Արշակ Գ. թագաւորը, չկամենալով մնալ հեթանոս ու բռնակալ արքայի հպատակ, թողեց ամեն ինչ և շատ

հետ անցաւ յունաց մասը։

Այդ որ տեսաւ Շապուհը, իր ձեռքի տակ եղած Հայաստանի մասի վրայ թագաւոր նշանակեց Արշակունեաց ցեղից մի ոմն Խոսրովի և կալածները գրաւելու սպառնալիքով՝ ետ կանչեց փախչողներին։

Նախարարները գերադասեցին վերադառնալ և ընդունել նոր թագաւորին—Խոսրով Գահին։ Իսկ երբ Արշակ Գ.ը, յունաց մասում մնալով, քիչ յետոյ մեռաւ անժառանգ, Խոսրովը ձեռնարկեց բանակցութեան մէջ մտնել յունաց Արկադիոս կայսեր հետ և խնդրեց, որ Հայաստանի այդ մասին էլ թագաւոր ճանաչէի, խոսանալով հնազանդութիւն և հարկ։

Կամենալով ունենալ ամբողջ Հայաստանը իրեն դաշնակից և բարեկամ, կայսրը զիջաւ ու Խոսրովին հռչակեց ամբողջ Հայաստանի թագաւորութիւն։

Պարսից արքունիքը հէնց որ իմացաւ Խոսրովի այդ դիմումի մասին յունաց կայսրին, մանաւանգ որ հայոց այս նոր թագաւորը ինքնազլուխ բաներ էլ էր սկսել անել և անհնագանդութեան նշաններ էր ցոյց տալիս—սաստիկ բարկացաւ։ Աւելացան դրա վրայ մատնութիւններ էլ հայոց կողմից։ Խոսրովը, ճշմարիտ է, մատածում էր և ծրագրում Հայաստանը լիովին հանել պարսից իշխանութիւնից և դնել Յունաս-

տանի գերիշխանութեան ներքոյ, բայց այդք
մտադրութիւնը չէր կարող հասնել Շապուհին,
եթէ չը լինէր հայ նախարարների մատնու-
թիւնը:

Շապուհը զայրացած՝ իսկոյն զօրք ուղարկեց
Հայաստան: Յոյները և հիւսիսային ազգերը,
իրենց խոստմանը հակառակ, օգնութեան չըհա-
սան: Խոսրովին բռնեցին պարսիկները, տարան
Պարսկաստան և այնտեղ բանտարկեցին Անյուշ
բերդի մէջ: Նրա փոխարէն թագաւոր նշանակ-
ւեց եղբայրը՝ Վուամշապուհ, 392 թւին:

Այդպէս էր ահա, որ երկար տարուբերում-
ներից և խոռվայոյզ տարիներից յետոյ՝ Հայաս-
տանի թագաւորն էր դառնում մի խելքը գլխին
մարդ, որին վիճակւած էր ոչ միայն քսան
տարի խաղաղութեան մէջ պահել երկիրը, այլ և
տեսնել հայ մտաւոր կեանքի ոսկէդարը:

2.

Սկսում էին վերջապէս խաղաղ օրեր:
Վուամշապուհը զիւանագէտ էր և շրջահայեաց:
Շուտով կարողացաւ հաւասարակշութեան մէջ
զնել երկու գերիշխան պետութիւնների ձըգ-
տումները և սիրելի դառնալ թէ պարսիկ ար-
քունիքին և թէ յունական պետութեան:

Այդ պատճառով էլ երկու պետութիւնները

համաձայնեցին իրենց գրաւած Հայաստանի
մասերի թագաւոր կոչել նրան, առնելով նշա-
նակուած հարկ:

Զը նայելով զրան, յոյները, իր անմիջա-
պէս հսկող և Վուամշապուհից աւելի իրաւունք
ների տէր, նշանակեցին իրենց մասի Հայաստա-
նում յոյն կառավարիչներ, որոնք երբեմն նոյն
իսկ դէմ էին զնում հայոց թագաւորի տնօրի-
նութիւններին:

Այս կամ այն կերպ, Վուամշապուհը իր 21
տարւայ թագաւորութեան ընթացքում երկիրը
պահեց խաղաղ զրութեան մէջ ազատ հալա-
ծանքներից և խոռվութիւններից:

Մի առժամանակ ազատւած այլևս քա-
ղաքական լարւած գործունէութիւնից, հայ կրօ-
նտաւորութիւնը սկսեց զբաղւել ներքին կեան-
քով և իր ուշքը դարձրեց քրիստոնէական կրօնի
տարածման վրայ, որովհետև երկրի շատ կող-
մերում դեռ ևս մնացել էին հեթանոսութեան
հետքեր: Կային դեռ տեղեր, ուր շարունակում
էին պաշտել «արի և իմաստուն» Արամազդը,
«ոսկեծին, անարատ» Անահիտը: Իսկ հեթանո-
սական բազմաթիւ սովորութիւններն ու ծէսերը,
նոյն իսկ քրիստոնէութեան անւան տակ, մնում
էին անաղարտ, պահպանուում էին և դեռ էլի
պիտի պահպանուէին շատ երկար դարեր:

Այդ ամենը արմատախիլ անելու համար

էր, որ կազմել էին և Վուամշապուհի օրով ա-
ւելի մեծ ջանքերով կազմել ոկտեցին՝ զանա-
դան կրօնական միաբանութիւններ, խմբեր, ո-
րոնք պրօպագանգիստներ էին պատրաստում և
քարոզելու ուղարկում հեռաւոր կողմեր:

Հանգամանքները նպաստաւոր էին: Ժա-
մանակայ Սահակ Պարթև կաթողիկոսն էլ, որ-
պէս իմաստուն և կրօնասէր մարդ, շատ օգնեց
և համակրեց այդ տեսակ գործունէութեան:
Խնքն անգամ ունէր աշակերտներ, որոնց պատ-
րաստում էր այդպիսի նպատակների համար:
Բացի գրանից, մարմնական իշխանութիւնները,
չնորհիւ Վուամշապուհի հրամաններին և նախա-
րարական իշխող տոհմերի հաւանութեանը, պէտք
եղած ժամանակ զինու ուժով օգնութեան էին
հասնում քարոզիչներին: Եւ դա յաճախ էր
պէտք լինում, որովհետեւ քարոզչական ձեռնար-
կութիւնները շատ էլ մեծ յաջողութիւն չէին
ունենում:

Պատճառը պարզ էր: Ժողովուրդը հակա-
սութիւն էր գտնում իր ճնշւած և սորկական
կեանքի, և սիրոյ, հաւասարութեան մասին խօ-
սող կրօնի մէջ: Նա ոչ միայն չէր տեսնում
արդարութիւնը հաւասարապէս գործադրւած ա-
զաների և հպատակների համար, այլ նոյն իսկ
շատ մութ գաղափար ունէր քարոզւող կրօնի
քարոյականի մասին, որովհետեւ չէր էլ կարողա-

նում պարզ ըմբռնել Քրիստոսի խօսքերը:
Սուրբ գիրք, աղօթք կամ մաղթանք գրւած
էին նրա համար բոլորովին անհասկանալի տ-
սորերէնով կամ յունարէնով:

Քարոզիչները թէկ խօսում էին հայերէն և
ժողովրդի լեզուվ, թէկ աւետարանը կարդում
ու ճգնում էին լսողներին թարգմանել, աղօթք-
ները աշխատում էին հասկացնել արտասանող-
ներին, սակայն այդ ամենը ոչ միայն տաժա-
նելի էր և յաճախ անյաջող ելք էր ունենում,
այլ և բնագիրները կորցնում էին իրենց ազ-
գեցիկ ոճն ու գրաւչութիւնը, և կցկառուր ու
շտապ թարգմանութեամբ՝ սառեցնում էին լսող-
ների ուշագրութիւնը:

Շատ շուտով քարոզիչները նկատեցին այդ
ոննպաստ հանգամանքը, մանաւանդ երբ պէտք
էր լինում խօսել յամառ հեթանոսների և աւե-
տարանի թարգմանութեամն ու Քրիստոսի խո-
նարհամիտ խօսքերը գժւարութեամբ ըմբռնող
և հին կրօնի մէջ աւելի թովիչ ոյժ գտնող ժո-
ղովրդին:

Պրօպագանդան այդպիսով՝ չէզօքանում էր
յաճախ և տաժանելի թափառութները շատ չնչին
հետևանքների էին հասնում. այնպէս, որ շատ ան-
դամ պրօպագանգիստները, ինչպէս ասում է
պատմագիրն ևս, .ի գործ էին զնում թշշառաց-
նող գաւագանը, բանտ, տանջանք և գելարան».

այսինքն մարմնական իշխանութիւնների միջոցով
բռնի ոյժի էին զիմում՝ „վայրենի, խուժադուժ,
բթամիտ և կոշտ հեթանոսների վրայ“ ազգելու
համար:

Այդ պրօպագանդիստ քարոզիչներից մէկն
էր ահա այն կրօնաւորը, որին վիճակւած էր
հայկական մտաւոր ինքնուրոյն կեանքի ստեղ-
ծողը դառնալ և հայ լեզուն գրականութեան
մէջ մտցնելու միջոցները դանել:

Մեսրոպ Մաշտոցն էր դա: Զարմանալի ան-
խոնջ, աշխոյժ և մինչև իր կեանքի վերջը շար-
ժուն մնացող մի կրօնաւոր, որ իր ոգեսրու-
թիւնը գիտէր ներշնչել ամենքին, որ ունէր
գրաւիչ դառնալու հմայք ու թովիչ եռանդ:

Մեծն ներսէս կաթողիկոսի աշակերտ, ա-
կանատես էր եղել նա այն մեծ ազգեցութեան-
տէր և եռանդուն կրօնաւորի լայնածաւալ գոր-
ծունէութեանը, որի ջնորհիւ երկիրը մի ժա-
մանակ, ամեն ուղղութեամբ լցւել էր վանքե-
րով, հիւանդանոցներով և նման կրօնաբարե-
գործական հիմնարկութիւններով:

Մեսրոպ Մաշտոցը Տարօնի Հացեկաց գի-
շեց էր, որդի մի ոմն Վարդանի, ըստ երևոյ-
թին՝ ազնւատոհմ:

Աշակերտել էր ներսէս Մեծի հիմնած դըպ-
րոցներից մէկում, մանկութիւնից վարժել էր
յունական լեզուին, սովորել նաև ասորերէնն ու

պարսկերէնը և աւարտելուց յետոյ, գնացել էր
Արաբատեան նահանգը, մտել զինուրական ծա-
ռայութեան մէջ Խոսրով Գառի օրով:

Ըստ երևոյթին, երիտասարդ Մեսրոպը ա-
ւելի շուտով զրչի մարդու կոչումն ունէր, քան
զէնքի, որովհետեւ շուտով աչքի էր ընկել իր
գիտնականութեան և լեզւագիտութեան շնորհիւ,
և Առաւան իշխանի հազարապետութեան օրովը,
նշանակւել արքունի դիւանին քարառողար:

Այնուհետև դժւար չեղաւ ծանօթանալ քա-
րաքական յարաբերութիւնների, արքունական
գաղտնիքների, այլևայլ կարգ ու կանոնների
հետ: Շատ առաջ կը գնար երիտասարդը, եթէ
կամենար, որովհետեւ ունէր վարկ ու յաջողու-
թիւն: Սակայն նրան չը գրաւեց դիւանագի-
տութիւնն էլ զինուրականութեան նման և նա
որոնեց մի այլ նպատակ, մի նոր գաղափար,
որով կարողանար ոգեսրւել և գործել:

Այդ միջոցին էր, որ հայոց կաթողիկոսա-
կան գահի վրայ նստեց ներսէս Մեծի որդին՝
Սահակ Պարթել:

Մի լուսամիտ, լաւ կրթութիւն ստացած և
յունական գիտութիւնով զարգացած անձ, Լու-
սաւորչի ցեղի ամենափայլուն և վերջին այդ
ներկայացուցիչը, իր հօրը նմանել կամենալով,
ձեռնարկեց կրօնական գործունէութեան:

Իրենից առաջ և հօր մտհից յետոյ, երկրի

խառն դրութիւնը նպաստաւոր չէր եղել և կեցցական-կրօնական լուրջ բարեկարգութիւնների: Ասենք՝ դժւար թէ այլևս հնար լինէր Ներսէս Մեծի ունեցած ազգեցութիւննը հետ, նրա հանգամանքներն էլ ունենալ: Փոխել էր քաղաքականութիւնը, փոխել և միջավայրը:

Պարսից տիրապետութիւնն էր այժմ, որ ծանրանում էր երկրի ամենամեծ մասի վրայ. յետոյ, վրայ հասաւ Խոսրով Գ-ի գերութիւնը, ապա՝ երկրի իրական բաժանումը տեղի ունեցաւ, իսկ Վուամշապուհի ժամանակ՝ կրօնաւորութիւնը երկուստեք սեղմւած, ստիպւել էր որոշ շրջանակի մէջ ամփոփել իր գործունէութիւնը:

Բացի դրանից, Սահակը իր հօր ոչ եռանդն ունէր և ոչ այն խրոխա, զրեթէ իշխանական զիրքը, որ պատկառանք և սարսափ էր ազգել Արշակ Բ-ի և Պապի նման թագաւորներին:

Սահակը կարող եղաւ միայն ոյժեր կազմակերպել՝ քրիստոնէութիւնը տարածելու և ամրապնդելու համար երկրում:

Հաստատեց վանքեր, նոր միաբանութիւններ, քաջալերեց ճգնաւորական կեանքը, ինքն իսկ հիմնեց կրօնաւորական մի նոր կարգ և սման յունական Սպուդէնների:

„Սպուդէններ“ կամ «ակումիդներ» էին կոչւում այն աշխատ և անհանդիսա կրօնաւոր-

ները, որոնց վանքերը քաղաքների մէջ էին գտնվում և իրենք էլ անապատական ճգնաւորների կանոնների համեմատ էին տպրում խիստ կեանքով, ոտարոբիկ, մաղեղէն միակ պարեգու հագած, սաստիկ աղքատ ու պարզ և անընդհատ զբաղւում էին աղօթքներով, այլ և զանազան ուսմունքներով:

Սահակը, չը նայելով որ ամուսնացած էր, ինչպէս այն ժամանակ ամսամնանում էին կաթողիկոսները—անշուշտ իր կաթողիկոսարանի մօտ էր հաստատուել այդ տարօրինակ ճգնարանը, ուր ինքն էլ միւսների նման իրեն ենթարկում էր ճգնութիւնների և խստութիւնների 60 միաբանների հետ, որոնցից շատերին, երբեմն էլ բոլորին իր հետը ման էր ածում իբրև օգնականներ և կամ ուղարկում էր զանազան կողմեր քարոզչութեան:

Ինչպէս ասում է ժամանակակից լաւագոյն պատմիչներից մէկը (Ղազար Փարավեցին), Սահակ Պարթիը ոչ միայն այդպէս կրօնասէր էր, բարեկազտ, խոնարհամիտ, այլ և լաւ լեզւագէտ էր և շատ աւելի բարձր՝ յունական գիտութիւնների մէջ. քան Մեսրոպը:

Բարեբախտութիւն էին ի հարկէ այն հանգամանքները, որ Խոսրովից յետոյ Վուամշապուհի նման խոհեմ ու քաղաքագէտ անձ նստեց հայոց թագաւոր և որ կատաղի Շապուհին յաջորդեց

նախ Յազկերտ Ա.-ը և ապա Վուամ արքան:

Բարեախութիւն էր նոյնպէս, որ կաթողիկոսական գահն ու գործունէութիւնը, ինչպէս և Հայաստանի մտաւոր կենտրոնով՝ երկրի պարակական մասումն էր և ոչ թէ յունական տիրապետութեան տակ եղած նահանգների մէջ:

Ո՞հ, այդ «քրիստոնեայ» կոչող յոյները. ոչ մի խոստում չը գիտցան նրանք բռնել երբէք, ոչ մի յարգանք, ոչ մի խղդ չունեցան Հայաստանի իրենց մասը տիրապետելու ամբողջ ընթացքում և խիստ հալածանքներով աւելի շատ արգելք էին լինում հայոց որևէ մտաւոր շարժմանը, քան պարսիկները:

Այսպէս թէ այնպէս, հէնց որ Սահակը հայոց կաթողիկոս դարձաւ, սկսեց մի աշխոյժ և ամփոփ, աչքի խփող գործունէութիւն, որը թէև կրօնական էր, բայց մտաւորական որոշ շարժումն էր առաջ բերում և ոգերութիւնից էլ զուրկ չէր:

Այդ իսկ շարժումն էր, որ գրաւեց մեր արքունական երիտասարդ քարտուղար, նախկին զինւորական և այժմ քաջ դիւանագէտ տարօնցի Մեսրոպին:

Անմիջապէս թողեց նա իր այնքան բարձր պաշտօնը, հագաւ կրօնաւորական վերաբերու, մտաւ մի վանք և իրեն նւիրեց մենակեցութեան ու ճգնաւորական կեանքին:

Քաղցի և ծարաւի, բանջարակերութեան, անլոյս աեղեր ապրելու, խարանազգեստ և գետնի վրայ պառկելու, գիշերը անքուն աղօթքով անցկացնելու դատապարտած իրեն՝ բաւական երկար ժամանակ մոռացաւ նա աշխարհն ու իր մարմինը այնքան, որ հոչակւեց և սիրելի դարձաւ շատերին և ունեցաւ աշակերտներ անգամ:

Այդ կեանքը նոյնպէս չըգոհացրեց որոնող անհանգիստ և միշտ բարձր նպատակների ձգտող երիտասարդին:

Մենակեցութիւնն ու ճգնութիւնը, խաւար տեղերում աղօթելու տենչը, խստամբերութիւնը, մանաւանդ անշարժութիւնն ու անորոշ, երագային աշխարհները — երկար փորձերից յետոյ, — տեսաւ որ ոչչի չէին հասցնում:

Անշարժ մնալ չէր կարող. չէր գոհացնում նրան այդպիսի մոռացութիւնը: Նրան հարկաւոր էր լայն գործունէութեան ասպարէզ, ուր կարողանար իր մէջ եռացող խանգը գործի դնել:

Միքանի տարիից յետոյ նոր կրօնաւորն արգէն մի խումբ աշակերտների հետ, թողած իր ճգնարանն ու մենակեցութիւնը, մեկնում էր գէպի երկրի խաւար անկիւնները, այնտեղ տանելու համար աւետարանի և գիտութեան լոյսը:

Մերուպի ժամանակ, յիրաւի Արարատեան և միքանի նահանգների կենարոններից բացի, կարելի էր ասել, որ բոլոր անկիւնները գտնւում

էին խաւար տգիտութեան մէջ։ Քրիստոնէութիւնը գժւարութեամբ էր մուտք գործում այդ կողմէրում, և եթէ մուտք՝ գործել էր Տրդատի խիստ հրամանների զօրութեամբ, հէնց որ բռնի ոյժը թուլացել էր, հեթանոսութիւնը դարձեալ համարձակ կանգնեցրել էր իր տաճարները և երգն ու պարը, տօներն ու գւարձութիւնները նորից հնչել էին սկսել անտառների և լեռների մէջ։

Յիրաւի, որտեղից այդքան շուտ կարող էր նոր կաօնը թափանցել ու արմատանալ Ավելաց լեռների բարձունքներին թառած, բնութեանը մօս ու նրանով ապրող հեթանոսների մէջ։ Իոկ Գողթան գաւառը, այն զինեւէտ, այն սքանչելի պարտէզներով, բուրսատաններով ու ծառաստաններով լի վայրերը, ուր գուսաններն էին ծնում և իրենց սքանչելի վեպերը շարադրում, ուր հնչում էին անդադար երգերն ու զրոյցները և ուր պարերգները՝ տափիզի, բամբիոի և թրմբուկի ընկերակցութեամբ, պղնձեայ փողերի, քնարի և ծնծղայի ձայների հետ, գեղօնների, ցցոց երգերի¹⁾ և նւազների գեղգեզներով հնչում էին ամեն ծաղկալից անկիւնում, ամեն վարդենու բուրսատանից, փրփրալից գինու կուժերի շուրջը բոլորած, երիտասարդների կայտառ պարերի միջից։

1) Հին բանաստեղծութեան տեսակներ։

Ո՛չ, հին կեսնքը գեռ զւարթ ու կայտառ, բարձրակոչ ու խանդալից՝ ապրում էր այն հեռաւոր անտառների ու լեռների մէջ, այնպիսի աստւածների հովանու տակ, որոնք չէին պահանջում մարմնի վայելքների ոչնչացումն, այլ ցնդիակառակն, ուրախութեամբ էին թաթախում խմեղ բաժակի առաջին ումափի ցօղման մէջ, ոնզունքները տալիս ծխացող անուշահոտութեան առաջին յորձանքին և յայնաբերան, լիաթոք քրքջում, ուրախ ժպիտով քաջալերում էին իրենց հովանու տակ եկած սիրող զոյգերին և կամ նւիրական ծառերի տակը ոստոստող կայտառ շրջապարերին։

Եւ այնտեղ մարդիկ ծանօթ չէին, չըգիտէին դաւեր ու դիւանազիտութիւններ. ոչ երազային աշխարհների տենչեր ունէին և ոչ սե, քուրձերի տակ գունատուղ դէմքերի կնձիւներ։

Այնտեղ ապրում էին լիաբուռն կեանքով՝ վայելելով բնութիւնը ամբողջ էութեամբ, առանց որ և է վերապահումի։

Ահա այդպիսի տեղեր էր, որ Մեսրոպը իր աշակերտներով քարոզելու, քրիստոնէութեան բոյսը սփոելու գնաց, մտածելով արմատախիլ անել հեթանոսութեան որ և է մնացորդ։

Դժբախտաբար նա էլ հանդիպեց „վայրենաբարոյ“, անհասկացող և յամառ հեթանոսների և «ստիպւած եղաւ» մարմնական իշխանութիւն-

ների դիմել ու բռնի ուժ հանել հին հաւատաւթքների դէմ:

Այդ իսկ քարոզչական գործունէութեանը ընթացքումն էր, որ երբ չէր կարողանում ասուրէն ընազրից շտապ թարգմանութեամբ կատարւող ազդու տողերովը հմայել լսողներին, — զգաց, թէ որքան անհրաժեշտ էր ժողովրդին տալ հասկանալի, մայրենի լեզով տւետարան, աստւածաշունչ և կրօնական գիրք, որ լուսաւորէր նրանց միտքը և մեղմացնէր բարքերը:

Չընայելով որ Մեսրոպի բերանացի թարգմանութիւնը ընազրի շափ ազդու էր լինում յաճախ, չընայելով որ այդ կրօնաւորը հոչակւեց որպէս ամենալաւ թարգմանիչը և մեկնիչը ոուրբ գրքերի —սակայն ինքը հետզհետէ համոզւում էր, որ բոլոր ջանքերը, նոյն իսկ բռնի ոյժերը ապարդիւն, անհետևանք պիտի անցնէին, եթէ ժողովրդի ձեռքը չըտրւէին մայրենի լեզով գրւած գրքեր, եթէ ընթերցանութիւնը և ուսումը չըգար շահելու բթացած մտքերն ու վայրենի բարքերը:

Եւ այսպէս, այլևս ամեն մտածութիւն և հոգ մի կողմը թողած՝ Մեսրոպը համակւեց միմիայն մի մտքով — այն է տալ ժողովրդին մայրենի լեզով գրքեր, աւետարան, ազօթք, ժամերգութիւն, և այլն:

Դրա համար ուրեմն, ամենից առաջ և ա-

մենագլխաւորն էր՝ ունենալ հայերէն լեզուի, նրա բոլոր հնչիւնները գրի առնող տառեր:

Այդ մտածութիւնը կամաց կամաց այնպէս համակւեց, կամնեց նրա միտքն ու զգացմունքները, որ թողեց նա քարոզները, թողեց քրիստոնէութիւնը տարածել, արմատացնելու եռանդը և նւիրւեց գիշեր, ցերեկ միմիայն մի խորհրդածութեան. այն է, գտնել տառեր, ունենալ հայ հնչիւնները պատկերացնող նշաններ:

Մտահոգ և մտատանջ, երկար տքնութիւններից ապարդիւնորէն վշացած և գրեթէ յուսահաս, որ կարողանար մի բան անել, Մեսրոպը թողեց իր քարոզչութեան տեղերը և գնաց Արարատ, ուր այդ ժամանակ Սահակ կաթողիկոսը սկսել էր կրթական գործունէութիւնը ընդլայնել և լիովին կանւել էր նրանով:

3.

Վաղարշապատ վերադառնալով, Մեսրոպը կաթողիկոսի մօտ գնաց և յայտնեց իր հոգսերն ու մտածմունքները: Այդտեղ, նրա առաջ գրաւնակ իր փորձերի արդիւնքը, որովհետեւ յիրաւի Մեսրոպը աշխատել էր գտնել հայ լեզուի հընչիւնները:

Կաթողիկոսը ուշադրութեամբ և մեծ ոգևորութեամբ լոեց Մեսրոպին, քաջալերեց նրա

մատածութիւններն ու փորձերը և ասաց.

— Դժւար չի թւում ինձ այդ ամենը, սակայն հարկաւոր են քեզ օգնականներ էր Միասին աշխատենք և գուցէ յաջողուի մեզ այդ: Իմ կողմից, որքան որ կարող եմ, անշուշտ կօգնեմ քեզ:

Եւ որովհետեւ լեզւագիտութեամբ յիրաւի կարող էր օգնել նրան, Սահակն ու Մեսրոպը միասին, միքանի եռանդուն օգնականների հետ, սկսեցին գործի:

Այդ ժամանակ Վռամշապուհ թագաւորը բացակայ էր Հայաստանից: Պարսից Վռամ թագաւորի առաջարկութեամբ՝ գնացել էր նա Միջագետք, խաղաղութիւն ձգելու համար պարսից և յունաց զօրքերի մէջ, այլ և վերջացնելու տեղի ունեցող խռովութիւնները:

Իմաստուն թագաւորը յաջողութեամբ կատարելուց յետոյ յանձնարարութիւնը, երբ մայրաքաղաք վերադարձաւ, Սահակ կաթողիկոսը յայնեց նրան Մեսրոպի մատածութիւնը, պարզեց գործի մեծ կարենութիւնը և իմացըեց, որ արդէն եռանդուն կերպով սկսել էին աշխատել դրա վրայ:

Վռամշապուհը շատ ուրախացաւ այդ բոլորի համար և որպէս խելօք մարդ, ըմբռնեց խսկոյն, թէ որքան մեծ կարենութիւն կարող էր ունենալ մայրենի լեզւի տառերի գործածու-

թիւնը երկրի ապագայի համար:

Եւ այդ ժամանակ էր, որ յանկարծ յիշեց նա, թէ երբ Միջագետք էր, հանդիպել էր այնտեղ Հարէլ անունով մի քահանայի, որը յայտնել էր իրեն, թէ Դանիէլ ասորի եպիսկոպոսի մատկային հայ լեզւի հին տառերը, որոնք վաղուց գործածութիւնից ընկել էին և իրը հնութիւն միայն մնում էին նրա մօտ:

Այդ լուրը մեծ ուրախութիւն պատճառեց ամենքին և առանձնապէս Մեսրոպին: Ուրեմն չէին կորսւել, յիրաւի կարելի էր գտնել՝ շատ հին դարերում, մեհեանների մէջ մշակւած, քուրմերի միջավայրում միայն գուցէ գործածող մայրենի լեզւի նշանագրերը:

Ի՞նչ էին դրանք, քանի հատ, ամբողջը կար, թէ կիսատ-պուատ. արգեօք հայերէն լեզու տառեր էին, թէ որ և է պատկերագրեր կամ ուրիշ լեզւի նշանագրեր:

Այլևս համբերել չըկարողացան ոչ կաթողիկոսը և ոչ Մեսրոպը. խնդրեցին թագաւորից՝ իսկոյն ուղարկել հաւատարիմ մարդիկ, և բերել տալ այդ թանկագին զիւռը:

Վռամշապուհի հրամանով և յատուկ հրովարտակով Միջագետք շտապեց արքունի պաշտօնեայ Վահովիձ Խաղունին, գտաւ Հարէլ քահանային և նրա հետ միասին գնացին Դանիէլ եպիսկոպոսի մօտ:

Ասորի եպիսկոպոսը նրանց առաջը դրեց տառերի մի ցանկ, հայկական հին նշանագրերի մի միացորդ, որ ովք գիտէ որքան ժամանակւանից ի վեր մոռացւած, գուցէ քրիստոնէութիւնից էլ հալածական, ոչնչացել էր և անհետացել մայրենի գրականութեան հետ, և այժմ իբր մի հնութիւն, ընկել էր Դանիէլի ձեռքը և նա, որպէս հետաքրքրութիւն՝ պահել էր:

Թէ որքան մեծ էր ուրախութիւնը մանաւանդ Մեսրոպի և Սահակի, երբ տառերն ունեցան—անշուշտ դժւար չէ երկակայել. Ուրեմն այնունետե հայ լեզուն պիտի հնչէր այլեատաճարների կամարների տակ և սուրբ գրքերը պիտի կարդացւէին մայրենի լեզով, գործածութիւնից գուրս պիտի ընկնէին „թւատ յունարէնն ու ծամածուած տառերէնը“, ինչպէս ասում է պատմիչներից մէկը:

Անմիջապէս ձեռնարկեցին, տառերը ուսուցանելու համար, գպրոցներ բանալ: Մեսրոպին օգնական տւին Յովհան Եկեղեցացի, Յովհակի Պաղնացի (յետոյ կաթողիկոս), Տէր Խորձենացի և Մուշէ Տարօնացի գիտնական կրօնաւորներին, որոնք բոլորն էլ նախ իրենք վարժեցին նոր տառերին և յետոյ սկսեցին սովորեցնել աշակերտներին:

Բայց չէր անցել երկու տարի, որ նկատեցին, թէ բերւած տառերը պակասաւոր էին

և ընդունակ չէին արտայայտելու. հայ լեզվի հնչիւնների բոլոր նրբութիւնները:

Դանիէլեան տառերն ուրեմն չէին լուծում հայ լեզվի կապերը և վանկերը. հէաց դրա համար էլ նրանք տեղի էին տւել երկի օտար տառերի գործածութեան առաջ և իրենց հետ էլ հանել էին գրականութեան մէջ գործածւելուց՝ մայրենի լեզուն:

Եւ ահա երկու ապարգիւն ատարիներ մեծ եռանդով աշխատելուց յետոյ, էլի վերագունում էին նախկին նոգսերին ու մտատանջութիւններին, էլի մէջտեղ էր գալիս շատ հընչիւններ գտնելու և այբուբենը լրացնելու հարցը:

Բայց այս անգամ, իհարկէ, գոնէ կար որ և է պատւանդան. բոլորովին չէին խարխափում խաւարի մէջ. կար նեցուկ. 22 տառերը հեշտացնում էին միացածի գիւտը, միայն հարկաւոր էր գիտնական մեծ, յարատե և փորձառու աշխատանք:

Մեսրոպը տեսաւ, որ ոչինչ չըպիտի կարողանար անել ինքը: Կամ յուսախաբութիւններից թուլացել էր և կամ ուղղակի անընդունակ էր գտնում իրեն այդպիսի դժւար հարցի համար:

Սահակ կաթողիկոսն էլ գիւտացաւ: Իսկ եթէ նրանք ձեռնթափ եղան, էլ ով կարող էր

զործին օգնել Հայաստանում:

Մուռմ էր դարձեալ դիմել օտար երկրներ, դիտնական աշխարհին դնալ և այնակ որոնել խնդրի լուծումը:

Այդ էր պատճառը, որ վճռեց Մեսրոպի և մի խումբ աշակերտներէ ճանապարհորդութիւնը դէպի Արևմուտք, անձամբ անելու հնարաւոր եղածը՝ հայերէն տառերի պակասը լրացնելու համար:

Յուսալից, որ ճանապարհորդութիւնը առարդիւն չըպիտի անցնէր, հաստատ որոշած էր չըդանալու՝ մինչև որ հասնէր իր նպատակին, Մեսրոպն և իր խումբը իջան առաջ Միջադեւք և տեսնեցին Դանիէլի հետ, մտածելով, թէ գուցէ կարելի լինէր գանել նրա մօտ նոր ծանօթութիւններ, այլ և տառերի մնացորդները:

Սակայն ի դերև ելաւ նրանց սպասածը: Ասորի եպիսկոպոսը ոչինչ չունէր աւելացնելու իր աւած տառերի և նախկին տեղեկութիւնների վրայ: Առաջին քայլի անյաջողութիւնը չը յուսահատեցրեց սակայն Մեսրոպին: Իր աշակերտների հետ գնաց նա Ասորիքի Ամիթ և Եղեսիա քաղաքները, ուր լաւ ընդունելութիւն գտաւ Ակակիոս և Բարելաս եպիսկոպոսներից:

Եղեսիայում Մեսրոպը տեղաւորեց իր հետ բերած աշակերտներից միքանիսին ասորական և ոմանց էլ յունական դպրոցների մէջ, իսկ

ինքը դիմեց քաղաքի մատենակարանի տեսուչ Պղատոնին և նրա առաջը պարզեց իր ճանապարհորդութեան նպատակը:

Պղատոնը թէս լսեց նրան, բայց հեղինակաւոր չըդառն իրեն լեզւագիտական հարցերում և յոյս յայտնեց, թէ գուցէ Եպիփանոսը կարող լինէր որ և է կերպ օգնել Մեսրոպին:

Եպիփանոսը վաղուց հեռացել էր Եղեսիայից, առանելով իր հետ մատենադարանից շատ գրքեր, և գտնւում էր Փիւնիկէ: Մեսրոպը գնաց մինչև այնտեղ էլ բայց երբ տեղ հասաւ, իմացաւ որ գիտնականը մեռել էր:

Բաւական երկար և յոգնեցուցիչ այդ ճանապարհորդութիւնը կարելի էր դարձեալ շարունակել, եթէ ունենար Մեսրոպը որ և է յոյս, եթէ մատնանիշ անէին որ և է նոր գիտնականի, որ կարող լինէր օգնել նրան:

Բայց ոչ ոք չըկար, ոչ ոքի ցոյց չըտեին: Միակը, որ մնում էր, դա էլ Եպիփանոսի մի աշակերտն էր—յոյն Հոռովանոսը, որ գտնւում էր Սամոսատ քաղաքում:

Մեսրոպը նրա մօտ էլ գնաց: Հոռովանոսը, իրաւ է, ճարտար գեղագիր էր (Ճարտար գրիչ), սակայն տառերը լրացնելու խնդրում ունչով օգնել չըկարողացաւ:

Այդաւեղ արդէն Մեսրոպը լիովին համոզւեց, որ այլս դիմելու տեղ չըկար, անօգուտ էր

ուրիշի վրայ յոյս դնել և որ օտար գիտնականների համար յիրաւի անհնար պիտի լինէր հնարել մի լեզւի այբուբենը, որի հետ անծանօթէին:

Բայց արգեօք Մեսրոպը այդ գիտնականներից սպասում էր, որ հնարէին հայ լեզւի համար այբուբէն, թէ գուցէ որոնում էր նրանց մօտ որ և է գիրք հայերէն լեզով, հին, անհետացած տառերով գրւած: Զէ՞ որ նա մատենադարաններ էր պրապտում, գրապահների էր դիմում: Հաւանականը գուցէ հէնց այն է, որ նա հայերէն լեզով գրւած գիրք էր որոնում, մի հին հատոր, մի երես գոնէ հին հայերէնով գրւածք, ծանօթանալու համար քրիստոնէութիւնից առաջ գործածող հայ լեզւի նշանագրերի և կամ Դամիէլից առած 22 տառերի մնացորդների հետ:

Որքան նւիրական պիտի լինէին այդ եռանդուն մարդի համար մայրենի լեզւի հին մնացորդները, որ նրանց համար յանձն էր առել այդքան թափառւմներ: Այժմ յուսաքեկ, որ որ և իցէ կերպ կարելի լինէր գտնել մի մնացորդ — որոշում էր այլես չըմտածել գտնելու կորուածը, այլ անձամբ նորից հնարել ու լրացնել ձեռք բերւածը:

Ամբողջովին կլանւած այժմ այդ գաղափարով, Մեսրոպը, ինչպէս առում են պատմիչները և մանաւանդ նրա վարքագիր կորիւնը, — յիշե-

լով այն խօսքերը թէ՝ «Երբ հեծեծես, տքնես, այն ժամանակ միայն կապրես», (այսինքն՝ թէ երբ լաւ աշխատես, այն ժամանակ միայն կըդառնես), Նվիրեց իրեն ջերմեռանդ աղօթքների և արտասւալից տքնութիւնների, պաղատեց Աստծուց այն, ինչ որ գտնել չըկարողացաւ մարդկանց մէջ:

Երկարատև տքնութիւնների, մաքի լարւած գործունէութեան և կենարոնացումի, լեզւագիտական իր խորունկ տեղեկութիւնների, այլ և կատարած բազմաթիւ գործերի շնորհիւ, հանճարեղ մարդը կարողացաւ վերջապէս լրացնել պակասող տառերը և այդպիսով համնել իր հոգատակին:

Աւանդութիւնը ասում է, որ երբ աղօթքների և տքնութիւնների մէջ խորասուզւած էր, նաև պաղատագին խնդրում էր Աստծուց լոյս, երբ լիովին կլանւած իր գաղափարով ընկել էր կրօնական յափշտակութեան մէջ, այսինքն ոչքնածութեան և ոչ էլ արթնութեան, այլ ինքնամուռացութեան մէջ, — նրա «Սրտի գոլծարանում, հոգու աչքերին երևեցաւ աջ ձեռքի մի թաթուր քարի վրայ դրոշմելու նման՝ գրեց պակաս տառերը և գրերի հետքերը մնացին ախալէս, ինչպէս կարող են մնալ ձիւնի վրայ»:

«Հոգու աչքերին» երևեցող աջ ձեռքի թաթից բացի, տառերի ձևն ու «հանգամանքներն

Էլ հաւաքւեցին նրա մտքում, ինչպէս մի ամանի մէջ»:

«Սրտի գործարանում, հոգու աչքերին երևեցան տառերը»: — Այնքան պարզ են այդ խօսքերը, որ հրաշբով բացատրելու հարկ չըկայ նրանց, եթէ, իհարկէ, հրաշալի չը համարենք Մեսրոպի այդքան գրաւելը իր մեծ գաղափարով:

Եւ դա անշուշտ հրաշալի է. հրաշալի է մասաւանդ Մեսրոպի տոկունութիւնն ու մեծ յամառութիւնը և հրաշալի նոյնպէս՝ տաժանելի աշխատութեան գիմանալու և առանց յուսահատութեան ամեն հնարք գործադրելու նրա մեծ կամքը:

Այսպէս թէ այնպէս, Քրիստոսի 404 թւականին Մեսրոպը իր հայրենի երկրին էր նւիրում այն տառերը, որոնցով այժմ գրում ենք. այն տառերը, որոնք ամենամեծ գործօնները եղան հայ ազգի գոյութեան պահպանմանը՝ շնորհիւ մայրենի լեզու:

Այլև պէտք չըկար ուրեմն գիմել յունարէնին կամ ասորերէնին. մնալ անհասկացող, ուսումն ու գիտութիւնը սահմանափակւած թողնել միքանի առաւձնաշնորհւած անձերի շրջանում և գրագիտութիւնը համարել մեծ արւեստ։ Այնուհետև կարող էին ամենքն էլ կարդալ գրքեր, ամենքն էլ սովորել գրելը, ըենցի

միտքը միմեանց հաղորդել և, որ կարեորն էր կրօնաւորութեան համար, այնուհետև քրիստոնէական կրօնի տարածումը հայերի մէջ լիովին ապահովում էր, որովհետև մինչև յետին գիւղացին անգամ կարող կըլինէր հասկանալ աւետարանն ու աստւածաշունչը և աղօթել մայրենի լեզուով։

Կրօնը, ինչպէս մտաւորական կեանքի հետ կապւած ուրիշ հաստատութիւնները, այնուհետև դառնում էին հարազատ, ամենքին մատչելի, ամենքին հասկանալի։

4.

Պէտք էր այդ ժամանակ Հայաստան լինել, աեսնելու համար, թէ ինչպիսի մեծ լափշտակութեան հասած մի ոգեսրութիւն տիրեց ամեն կողմ, երբ լուրը հասաւ, թէ Մեսրոպը գտել էր տառերը, կազմել էր լիակատար ալբուբենը և վերադառնում էր հայրենիք։

Մեսրոպը յիրաւի կարողացել էր լրացնել տառերի մնացորդը՝ ինքնաշխատ տքնութիւնների շնորհիւ, ինչպէս առեց։ Յետոյ, գեղագիր Հռովիսնոսի օգնութեամբ գծագրել էր նշանագրերը, և ահա այժմ վերադառնում էր Հայաստան, իր յոյսերի իրականացմանը հասած, վերին աստիճանի ուրախ և գործունէութեան մի մեծ,

անսահման եռանգով լի:

Եւ ինքը Մեսրոպը, փորձի համար առաջին անգամ թարգմանել էր Սողոմոնի առակերը, որոնք սկսում են այսպիսի շատ յարժար խօսքերով.

„Ճանաչել իմաստութիւնը և խրատը, իմանալ հանճարի խօսքերը...“

Որ և առաջին անգամ մագաղաթի վրայ դրոշմեց հայ այբուբենը կազմողը, որանից ձիւ՝ 1506 տարի առաջ:

Հասած իր նպատակին, գալիս էր ուրեմն Մեսրոպը դէպի հայոց թագաւորանիստ մայրաքաղաքը, ուր նրան անհամբեր սպասում էին թագաւորն ու կաթողիկոսը:

Վաղարշապատն ամբողջ, երկրի թագաւորն և իշխանները, զօրագնդերն ու պալատական ամբոխը, նրանց առջեկց կաթողիկոսը եկեղեցական դասի հետ, դուրս էին ելել դէպի Ռահանտի ափերը՝ դիմաւորելու Հայաստանի իսկական կուսարչչին, որ բերում էր իր հետ երկրի և ժողովրդի համար լոյսի մեծ ջաճը, նրա գոյութեան գլխաւոր նեցուկը, մայրենի լեզուն ընդ միշտ ապահովող գրերը:

Թէ ինչպիսի ցնծութեամբ ընդունեցին Մեսրոպին թագաւորն ու կաթողիկոսը և թէ ինչպէս փառահեղ էր այնուհետեւ նրա մուտքը մայրաքաղաք, նկարագրում է Կորիւն պատմիչը

հետեւալ խօսքերով.

„Նախարարագունդ ամբողջ աւագանու ամբոխը հետը վերցրած՝ թագաւորը և կաթողիկոսը դուրս գնացին քաղաքից և հանդիպեցին Երանելին (Մեսրոպին) Ռահ գետի ափի մօտ Յանկալի ողջոյնը տւին միմեանց, յետոյ հոգեւոր երգերով և ուրախ խօսքերով և մեծ օրհնութիւններով վերադարձան քաղաք և օրերով տօն կատարեցին“:

Հարկաւոր էր սակայն այլև չը կորցնել ժամանակը: Մեսրոպի մտքում բենուած միայն միմիակ մտածութիւն կար այժմ, այն է՝ հայրենի երկիրը լուսաւորել, տառերը մտաշելի դարձնել ամենքին, թարգմանել սուրբ և այլ գրքերը, սովորեցնել ընթերցանութիւն, մի խօսքով գործածութեան դնել հայ լեզուն:

Այս նոյն մտածութիւնով համակեց նաև Սահակ կաթողիկոսը: Մի վերջին անգամ ևս աշքի անցկացնելուց յետոյ նոր այբուբենը, գանելուց յետոյ, որ նա յիրաւի համապատասխան էր հայ լեզուի հնչիւններին,—իսկոյն ձեռնարկեցին թարգմանութիւնների:

Սահակ Պաթեկ, ինչպէս և Մեսրոպի ու ամբողջ հայ հոգեւորականութեան համար այդ կէտը ամենակարեւորն էր: Այն է, անմիջապէս ձեռնարկել մայրենի լեզուն մտցնելու եկեղեցիների մէջ, թարգմանելով սուրբ գրքերը,

շարադրելով աղօթքներ ու հոգեոր երգեր և
ժողովրդին մատչելի դարձնելով քրիստոնէական
կրօնը:

Միաժամանակ սկսւեց բազմակողմանի հ-
ռանդուն, ուղղակի տենդային մտաւոր մի շար-
ժում, որ յետագայ 20 տարւայ ընթացքում
յաջողւեց ընդ միշտ դուրս հանել երկրից օտար
լեզուների տիրապետութիւնը:

Ամեն տեղ բացւեցին դպրոցներ, կազմւե-
ցին թարգմանիչների խմբեր, ինքը Սահակ կա-
թողիկոսը, որպէս մի հմուտ լեզւաբան, այբու-
բենը կարգաւորելուց յետոյ, ձեռնարկեց աս-
տածաշնչի թարգմանութեանը, իսկ Մեսրոպը
անընդհատ տեղից տեղ սկսեց ճանապարհորդել
և նոր բացւած դպրոցների վրայ հսկել, միաժա-
մանակ ինքն էլ թարգմանելով, հեղինակելով,
բանաստեղծելով:

Դպրոցները չուշացան գեղեցիկ արդիւնք-
ներ տալուց: Միայն հոգեորականներ ունենա-
լու մտադրութեամբ չէր, որ ուսուցանում էին
հայ գրագիտութիւնը, միայն եկեղեցական և
հոգեոր գրքերի համար չէր, որ աշակերտները
բուռն եռանդով կպել էին գործի, այլ դպրոց-
ներից դուրս էին գալիս խմբեր էլ, որոնք երկու
սերունդ յայտնի հեղինակներ ու թարգմանիչ-
ներ պիտի տային հայ գրականութեան և յու-
նական ու հին միւս աշխարհների գիտութիւնները

բերէին հայրենիք:

Ո՞վ ասես, որ չը սովորէր այն ժամանակ
գրել հայ տառերով. իշխան, կրօնաւոր, գիւղա-
ցի, բոլորն էլ ձգտում էին օգաւելու նոր գիւ-
տից: Սովորում էին Վարդան Մամիկոնեանն
իր եղբայրներով (թոռներ Սահակ կաթողիկոսի),
սովորում էին նախարարական տների գաւակները,
այլ և գիւղացիներ՝ ինչպէս Ղենդ երեց իշա-
ւանքից, Աբրահամ սարկաւագ Արած գիւղից,
և այլն:

Յիրաւի՛, այդ տարիների ընթացքում երա-
նելի, ցանկալի և անպայման սքանչելի էր դառ-
նում հայոց աշխարհը, ինչպէս ասում է պատ-
միչը (Կորիւն): Ամեն կողմ ոգեսրութիւն էր,
աշխոյժ գործունէութիւն մտաւորական շարժ-
ման և, Վռամշապուհի իմաստուն թագաւորու-
թեան շնորհիւ, նիւթական ապահովութիւնն ու
խաղաղութիւնը կատարեալ էր:

Ուկեգար էր այն, չըտեսնւած վերակեն-
դանացումի մի շրջան:

Ու մինչ բացւած դպրոցները միմեանց ե-
տեկից պատրաստում էին ուսանողներ արտա-
սահմանի համար, իսկ նախակին գնացողները վե-
րաբարձած՝ հայրենիքի մտաւոր շարժման գլու-
խը էին անցնում,—ինքը Մեսրոպը, այս ան-
գամ արդէն ապահով, որ իր քարոզչական գործը
չը պիտի այլևս խոչընդոտների հանդիպէր, օգ-

նական աշակերտների հետ գնում էր գէպի Քողթան գաւառ, ուր, տեղական իշխան Շաբաթի օգնութեամբ, սկսում էր եռանդուն պրօպագանդա՝ քրիստոնէութիւնը տարածելու համար:

Այնտեղ էլ նա վաճքեր հիմնեց և միաբանութիւն հաստատեց, գլուխներ բաց արաւ Յետոյ անցաւ Սիւնիք, ուր Վաղինակ իշխանի օժանդակութեամբ ման էր գալիս և հասնում մինչև ամենախուլ անկիւնները:

Դժւար չէր քարոզիչների համար՝ հասկանալի կերպով կարդալ ու մեկնել այն «վայրենաբարոյ գագանամիտ» ժողովրդին աւետարանը իրենց մայրենի լեզով։ Այնքան մեծ էր յաջողութիւնը, որ կարելի եղաւ վայրենիներից, կրթելով, Սիւնեաց եկեղեցիների համար եղիուկուսներ տնգամ ունենալ և վանական միաբանութիւն կազմել:

Մեծապէս օգնեց Մեսրոպին Վասակ՝ Սիւնեաց տէրը, որ, ինչպէս պատմիչն է վկայում, մտածող, հանձարեղ և յառաջիմաց մարդ էր, Աստծոյ իմաստութեամբ լեցուն։

Մեսրոպը աննկուն ճանապարհորդեց ամբողջ Հայաստանում, մտաւ խուլ անկիւններ, սփոեց լոյս՝ հայկական նոր տառերի շնորհիւ և, ինչպէս նրա վարքագիրն է ասում, գնաց նոյնպէս այլուրենկազմելու վրացոց համար, օգնութեամբ

Նրանց թագաւոր Բակուրի և Եպիսկոպոս Մոլուսի, մանաւանդ մի գիտնականի, որ կոչւում էր Զաղայ:

Այդ երկար ճանապարհորդութիւնից վերադարձած, մտածեց այնուհետև գնալ Հայաստանի այն մասերը, որնք յունաց իշխանութեան տակն էին և այնտեղ էլ տարածելով հայ այլուրենը, մայրենի լեզուն մտցնել եկեղեցիների մէջ։

Ցոյն իշխանութիւնը հէնց առաջին քայլից ոչ միայն խոչընդուներ հանեց նրա նպաստակների առաջ, այլ ուղղակի ընդդիմացաւ հայերէն լեզով և մանաւանդ գրականութեան՝ հայոց մէջ մացնելու ծրագրին։

Վրդովւած յոյների այդ վարմունքից, թոյլաւութիւն ունենալու համար, Մեսրոպը ստիպւած եղաւ Բիւզանդիոն գնալ:

Թէոդոս կայսը ոչ միայն խոհեմութիւն համարեց թոյլաւում բացւեն հայ գլուխներ և հայ տառերն ու լեզուն մտուաք գործեն հայ եկեղեցեների մէջ, այլ և շնորհեց Մեսրոպին „Ակումիդ“ (առաջին վարդապետ) տիտղոսը։

Այնուհետև այլես ամբողջ Հայաստանում տեղ չըմնաց առանց գլուխի՝ հայկական նոր տառերը, հայ լեզուն ու գրականութիւնը գնացին տարածելու ամբողջ երկրում։

Դրանից յետոյ, ինչպէս ասում է պատմիչը,
Մեսրոպին հրաւիրեցին աղւանների համար էլ
այրութեն կազմելու, և նա այդ երկրի Արավադ
անունով թագաւորի ձեռնտւութեամբ՝ դպրու-
թեան արհեստը մտցրեց այնտեղ, բանալով դրա-
բոցներ, ուր աղւանները սկսեցին սովորեցնել
աղւանական նորագիւտ տառերով:

5.

Բայց միթէ հարց չի ծագում, թէ Հայաս-
տանի մէջ գտնւող բարբառից որ մէկն էր, որ
մտաւ գրականութեան մէջ, գարգացաւ գրա-
կանութեամբ, դարձաւ նրա լեզուն և մեզ հա-
սաւ «գրաբառ» կոչումով:

Միթէ կարծում էք, թէ գրաբառը ինքնա-
նար, գրականութեան համար ստեղծւած մի
լեզու է: Եթէ այդպէս է, ուրեմն և այժմեան
մեր, նոյն իսկ Արարատեան բարբառն էլ, հնա-
բովի է. չէ՞ որ մեր այժմեան գրական, գրքերի
լեզուն կատարելապէս նման խօսող տեղել
անգամ կային սրանից հէնց 20—30 տարի
առաջ:

Լեզու ստեղծողն ու մշակողը ժողովուրդն է:
Ոչ մի անհատ չի կարող հնարել ու ստիպողա-
կան դարձնել նոյն իսկ մի բառ, եթէ նա չի
յարմարւում ժողովրդի խօսած, դորձածած լեզ-

ւի ոգուն: Օրինակներ շատ ունենք: Սկսած
Դաւիթ Անյաղթից (Վ դար), նորերս էլ մի
քանի պարոններ, օրինակ, փորձեցին իգականի
համար նէ գործածել: Գրքեր էլ գրեցին
այդպէս: Եւ ի՞նչ եղաւ: Ոչինչ. այդ բառը խորթ
էր, ժողովուրդը, հետեապէս գրականութիւնը,
չընդունեցին նրան և ծիծաղեցին միայն: Այդ-
պէս էլ չէր ընդունւել նա V դարում, նոյնպէս
և չընդունւեցին 1860 թւականից մինչև 1890
թիւը եղած փորձերը:

Դրա փոխարէն, կան բառեր ու ոճեր, ո-
րոնք նորահնար են, և որովհետև յարմար են
եղել մեր լեզվի ոգուն, ուրեմն և դիւրութեամբ
ընդունւել են ու գործածական դարձել:

Այդպէս ուրեմն, մի անհատ, մի խումբ
մարդիկ լեզուն իրենց ուղածի պէս շուռումուռ
տալ չեն կարող: Ժողովրդին պիտի նայել, որով-
հետև նա է լեզվի տէրը, լեզուն գործածողը,
մաշողը կամ գարգացնողը:

Ինչպէս շուռումուռ տալ չի կարելի լե-
զուն, այնպէս էլ շինել չի կարելի նրան: Ե-
ղածը կոկել կամաց-կամաց, մշակել զգուշու-
թեամբ, ազատել կոշտ ու խորթ տարրերից,
դնել կանոնի տակ և կամ, եղած կանոնները
գտնելուց յետոյ, ժամանակի ընթացքում կանոն-
ներից դուրս եղածները կանոնի բերել,—ահա
դա է, որ կատարել է միշտ, կատարւում է և

գիտի կատարւի լեզուների մէջ:

Լեզուն էլ, աշխարհիս ամեն բանի նման,
բարեցը ջութեան է ենթարկւում, բարեփոխուում
է և շատ ու շատ դարերի վրայով անցնելուց
յետոյ, ուրիշ կերպարանք է ստանում, այն-
պէս որ, յաճախ դժւարանում ես գտնելու
նախկին կերպարանքը—բառերի արմատը, այս
կամ այն ոճի ու բառի հայրենիքը, ծննդեան
պատճառներն ու զարգացման լնիքը:

Այդպէս էլ եղել է զրաբառը, այդպէս էլ
ինելու է մեր այժմեան զրական լեզուն:

Գրաբառը հայաստանում անշնուշտ խօսւած
մի լեզու է եղել V դարից շատ ու շատ առաջ,
(օրինակ, հէնց Տարօնի, Մշոյ լեզուն, որ բաւա-
րան յիշեցնում է զրաբառը)—որ մտել է
զրականութեան մէջ, ժամանակի լնիքը քու-
ժակւել է, ճոխացել, կրթւել ու կոկւել:

Յետոյ, յաճախ զանազան հանճարեղ զրոդ-
ների և մանաւանդ բանաստեղծների նուրբ ճա-
շակին ենթարկւած, հասել է Մեսրոպին ու Սա-
հակին, որոնք և առել են ու նրանով թարգմա-
նել աստւածաշունչը, տեետարան, զրել այնքան
ըոգեշունչ ու սիրուն շարականներ, մեղեղիներ
և աղօթքներ:

Այդպէս է եղել, որ զրաբառը (զրելու լե-
զուն) տեղ է զրաւել մեր հին զրականութեան
մէջ և V դարիւմ այնքան մշակւել ու ճոխա-

ցել է, այնքան կարդ ու կամոնի է մտել ու
սիրունացել, որ մարդ հիանում է, երբ կար-
դում է սուրբ Սահակի թարգմանած հայերէն
աստւածաշունչը և կամ լսում է աւետարանի
պարզ, մաքուր, հնչուն և շքեղ լեզուն, այն-
քան ազդու և այնքան գեղեցիկ:

Եւ յիրաւի, աստւածաշունչի հայերէն թարգ-
մանութիւնը, որ երկու անգամ, առանց ձանձ-
րանալու կատարեց սուրբ Սահակը, համար-
ւում է թարգմանութիւնների մէջ ամենալա-
ւերից մէկը:

Իսկ եթէ կարդաք Եղիշէն, Խորենացին,
եթէ Սահակի և Մեսրոպի բանաստեղծական
հոգևոր երգերն ու շարականները զիտենաք և
մանաւանդ թէ բոլոր թարգմանիչների կարեսը
գործերը և յետոյ Նարեկացու այն վերին աս-
տիճանի շքեղ ու բարձր, գրեթէ աստւածային
լեզով գրւածքի խորը թափանցէք, մեր լեզւի
նրբութիւններն ու հարսաւութիւնը ընդումարեք
այնաեղ...

Այդպէս լեզով էր ահա, որ թարգմանեցին
V սոկէ գարում Սահակն ու Մեսրոպը, նրանց
աշակերտներից առաջին թարգմանիչները՝ Եղ-
ակին ու Կորիւնը, Դաւիթ Անյաղթն ու Մամբ-
ըէն և յետոյ, աւելի կրտսերներից, Մովսէս Խո-
րենացին և Ղազար Փարպեցին, իւրաքանչիւրը
մի մի փիլսոփայ կամ վարքագիր, իմաստասէր

կամ պատմիչ, որոնք թողել են, հասցըել մեզ
իրենց նւիրական գրւածքները, սրանից մօտ
1500 տարի առաջ հեղինակած, երբ դեռ այն-
քան դիւրութիւններ ու յարմարութիւններ
էլ չը կային գրելու և հեղինակելու, որքան
այժմ:

Եւ յիրաւի, այդ հին գարերում, չըպէտք է
մոռանալ, որ գիրք գրելը կապւած էր մեծա-
միծ գժւարութիւնների հետ, իսկ գրքերի տէր
լինել կարող էին միայն կամ շատ հարուստ
մարդիկ և կամ միայն կրօնական հաստատու-
թիւնները—վանք, եկեղեցի և այլն:

Ինքներդ գատեցէք: Թուղթը դեռ չէր
հնարւած, գրում էին մազաղաթի վրայ, այսինքն
մի տեսակ նուրբ, բարակ կաշւի վրայ, որ
պատրաստում էին գառան և ուրիշ մատղաշ
կենդանիների մորթիից: Բերում էին մորթը,
մաքրում, սպիտակացնում, յետոյ հարթում,
փայլեցնում և թերթ թերթ կտրտում: Թէ որ-
քան ուրեմն թանկ պիտի լինէր, օրինակ, հինգ
մի աստւածաշունչը, որը երեխ պիտի կազմւած
լինէր առնւազն 4—500 գառան մորթից.—այդ
կարելի է երեակայել՝ ի նկատի ունենալով, որ
մազաղաթի պատրաստութեան համար ոչ մե-
քենաներ կային, ոչ գործարաններ այլ ամեն
ինչ ձեռքով էր պատրաստում և երկարատե,
տաժանելի աշխատանքով:

Բայց այդ չէր ամենը: Տպագրութիւն չը
կար, ոչ էլ գրելու յարմար տառեր, որ մարդ
կարողանար արագ գրել: Հարկաւոր էր նախ
մաքուր գրել ամենքի ընթերցանութեան համար,
և յետոյ տառերը որոշ գծագրել մէկ մէկ, ուղ-
ղակի նկարել: Քննեցէք մէկ հին ձեռագիրները
և կրտեսնէք որ մի մարդու կեանքը երբեմն
բաւական չէր, գրել լրացնելու համար մի աս-
տւածաշունչ:

Ուրեմն պէտք էր արտագրել՝ երկաթէ կամ
փետուրէ զրիչներով, անյարմար թանտքով,
ծաղկանկարներ, գծեր, և—սարսափելի չար-
չարանք—կուացած կաշւի թղթերի վրայ:

Եւ յետոյ, ինչքան գին պիտի դրւէր մի
այդպիսի գրքի, օրինակ, մի աստւածաշունչի:
Եթէ ասեմ 1000 ըուբլի, շատ քիչ գնահատած
պիտի լինեմ: Կայ այժմ թանգարաններում աս-
տւածաշունչներ, որոնք ոչ թէ իրենց հնու-
թեան, այլ նոյն իսկ գեղեցիկ գրւածքի, մէջը
ունեցող նկարների և մանրակրկիտ աշխատու-
թիւնների համար՝ գնահատել կարող են տաս-
նեակ հազար ըուբլիներ:

Մարդ երբ մէնակ հէնց եշմիածնի թան-
գարանում տեսնում է մազաղաթէ այն հազա-
րաւոր հակայական ու մանը գրքերը իրենց տախ-
տակէ կաշեպատ, երբեմն փղոսկրեայ և արծա-
թեայ քանդակներով գրքերը—հիանալ միայն

կարող է մեր նախնիքների տռկնութեան, համբերութեան և ուսումնախրութեան փափազի վրայ: Փափազ, որ խենթութեան չափ ոգևորում էր նրանց և ամբողջ կեանքը երբեմն միայն մի հատ գիրք արտադրելու նւիրելուն առաջնորդում...

6.

Սուբբ Մեսրոպին ոչ միայն իբր գործակից, այլ յաճախ կարեոր ցուցմունքներ և ուղղութիւն տռողը եղաւ հայոց կաթողիկոս Սահակ Պարթև:

Կուսաւորչի այդ վերջին շառաւիդին իրաւամբ կարելի է կոչել Մեծ, որովհետեւ բացի իր արած ծառայութիւններից հայկական այբուբենին և հայ գրականութեան, նշանաւոր էր նաև իբր թարգմանիչ աստւածաշռնչի և հեղինակ յայտնի շարականների ու կրօնական երգերի:

Սահակ Պարթև, Ներսէս Մեծն կաթողիկոսի որդին, ծնւել էր 354 թւին և կրթութիւնը ստացել կեսարիա, յետոյ Բիւզանդիոնում: Եռանդուտ և ուսումնասէր հօր իմամքի տակ, նումեծացել էր այնքան բարեպաշտ և կրօնական ոգով լի, որ զուտ ճգնաւորական կեանք ոկտեյվարել կուջ մահից յետոյ, բուրծ հաղաւ, շղթայ կրեց իբր գոտի և իբր 60 աշակերտների հետ

գիշեր-ցերեկ աղօթքի և ջերմեռանդ գրաղումների մէջ էր կեանք վարում:

Սոպուրակէս կաթողիկոսի մտհւանից յետոյ, թէ Խոսրով Գ. թագաւորի և թէ մանաւանդ ժողովրդի կամքով, Սահակը ընտրւեց կաթողիկոս ամենայն հայոց, 389 թւին:

Սակայն երբ Խոսրովը յիրաւի կամեցաւ գուրս գալ պարսից հովանաւորութիւնից և բարեկամանալ յոյների հետ, հայ նախարարները մատնեցին այդ մտադրութիւնը պարսից Շապուհ թագաւորին և սա գահընկեց անելով Խոսրովին, Սահակ կաթողիկոսին էլ զրկեց իր տիոսից, որպէս մի կրօնաւորի, որ կրթւել էր Յունաստանում, յունասէր էր և կաթողիկոս էր գարձել առանց պարսից իշխանութեան համաձայնութիւնը ստանալու:

Վուամշապուհի օրով, սակայն, նորից Սահակ Պարթևը, այս անգամ պարսից հաւանութիւնով ևս, գարձաւ հայոց կաթողիկոս:

Ահա այդ ժամանակ էր, որ նա մեծապէս օգնեց Մեսրոպին՝ հայկական այբուբենը կազմելու, երկրում ուսումը մայրենի լեզով տարածելու և ուրիշ շատ կրթական գործերի մէջ:

Վուամշապուհի քսանեմէկ տարւայ խաղաղ, բեղմնաւոր և իր հարստութեան մէջ ամենալաւ թագաւորութեան ժամանակ՝ Հայաստանը վայելելուց յետոյ իր ոսկէ գարը լիուլի երջանկու-

թիւնով, յանկարծ սուդի մէջ ընկաւ, երբ մեռաւ այդ իմաստուն իշխանը և չըթողեց գահի վրայ նստելու ընդունակ ժառանգ:

Վոամշապուհի միակ որդին Արտաշէսը տասը տարեկան երեխայ էր: Դրա համար էլ Սահակ կաթողիկոսը ստիպւած եղաւ գնալ Պարսկաստան և ինզրել Յազկերտ Ա. թագաւորից, որ Անուշ բերդից արձակէ ծերունի Խոսրով Գ.ին և նշանակէ թագաւոր: Յազկերտը համաձայնւեց, Խոսրովը նորից եկաւ Հայաստան, բայց շատ քիչ, միայն մի տարի ապրելուց յետոյ, մեռաւ և դարձեալ գահը մնաց թափուր:

Օգուելով այդ հանգամանքից, Պարսկաստանը կամեցաւ Յունաստանի պէս վարել այն է, լիովին ջնջել իր ձեռքի տակ եղած Հայաստանի անկախութիւնը և դարձնել նրան պարսկական նահանգ: Դրա համար էլ Յազկերտ Ա-ը, իր Շապուհ որդուն օդնական զօրք տալով, ուզարկեց Հայաստան իրը թագաւոր:

Արգելք չըկար: Շապուհը կարողացաւ նստել հայկական գահի վրայ և զօրեղացնել պարսկական ազգեցութիւնը, մտածելով խնջոյքների, խաղերի և որսորդութիւնների միջոցով փչացնել բոլոր իշխաններին, զբաւել կամ վատասերել նախաբարկան տոհմերը:

Հայ իշխանները շուտ հասկացան նրան, այլ և չըհանդուրժեցին, որ իշխէ իրենց մի

պարսիկ, այն էլ Շապուհի նման թուլամորթ թագաւոր, ու սկսեցին այնպէս արհամարհանք ցոյց տալ նրան, որ նա չորս տարի Հայաստան մնալուց յետոյ, Պարսկաստան վերադարձաւ՝ հօր գահը ժառանգելու համար:

Օգուելով Պարսկաստանի խառնակ գրութիւնից, հայերը Շապուհի ետևից՝ գուրս քշեցին պարսիկ կուսակալին իր զօրքով ու պաշտօնեաներսով և երկիրը միասմանակ մնաց անիշխանութեան մէջ, մինչև որ Պարսկաստանի գահի վրայ, սպանելով Շապուհին, թագաւոր նստեց Վոամը և շատպեց մեծ բանակ ուղարկել Հայաստան:

Գուշակելով լինելիք աւերածութիւնը և ի նկատի ունենալով, որ պիտի դժւարանար այնունետե որ և է կըթական զործունէութիւն—Մահակ կաթողիկոսը Մեսրոպի հետ, առնելով իր թոռներն էլ, անցաւ յունական բաժնի Հայաստանը և այնտեղ սկսեց զործունէութիւն: Մեսրոպը ման էր զալիս նորից և տարածում էր հայ զբականութիւնը՝ քրիստոնէական կրօնի հաստատութեան համար:

Մինչ այդ, պարսից Վասմ թագաւորի զօրքերը աւերածութիւններով նորից տիրեցին Հայաստանին և երեք երկար տարիներ քարուքանդ արին նրան, նրանք վշրեցին ու ջարդեցին այնքան, որ նախ յոդնեցին և յետոյ տեսան, թէ եր-

կիրը ամայանում էր և այլես ընդունակ չըպիտիլի՛նէր որ և է եկամուռ տալու պարսից արքունիքին:

Այդ էր պատճառը, որ Վուամը հրամայեց դադարեցնել ամեն աւերածութիւն և մտածելով, որ առանց նախարարների ձեռնտութեան չըպիտի կարողանար խաղաղացնել Հայաստանը, պատգամ ուղարկեց Բագրատունի Սմբատ առպետին, որ նա հաշտութեան միջնորդ լինէր նախարարների մէջ, խոսանալով մոռանալ անցեալը և թագաւորեցնել Հայաստանի վրայ Վուամշապուհի որդուն—Արտաշէսին:

Այս մեղմութիւնը դուր եկաւ պաշարման վիճակից թուլացած հայ նախարարներին: Նրանք խոկոյն լուր ուղարկեցին Սահակ կաթողիկոսին և խնդրեցին, որ ետ գառնար Արարատ:

Կաթողիկոսը վերագրարձաւ, նախարարներից մի մեծ ժողով կազմեց Վարարշապատում և յայտնեց Վուամ թագաւորին հայոց ազգի կատարեալ հնագանդութիւնը:

Վուամը խոկոյն ընդհանուր ներսպատթիւն յայտարարեց և տասնեռութ տարեկան Արտաշէսին նշանակելով հայոց թագաւոր, անունն էլ պարկացրեց, Արտաշիր կոչեց:

Այսպիսի հանգամանքների մէջ էր ահա, որ կաթողիկոսական գահը նորից Արարատ բերւեց և Մեսրոպն ու Սահակը վերագրարձան իրենց

գործունէութեան նախկին սիրելի վայրերը:

Սակայն, ճակատագրական էր, խարխւել էր Արշակունիների գահը, օգուտ չունէին կարկատանները: Արտաշէս Գ-ը այնպէս վաս վարք ու բարք ունեցաւ, այնպէս վատ վարւեցաւ նախարարների հետ, որ սրանք այլես չըդիմացան, որովհետեւ նրանց զրեթէ ամենքին զանազան ձեռվ խոր վիրաւորանքներ էր հասցըել երիտասարդ թագաւորը:

Եւ ահա խորհրդի եկան բոլորը ու վճռեցին խնդրել պարսից թագաւորին՝ զրկելու գահից անարժան պատանուն և պարսիկ մի կուսակալ նշանակելու Հայաստանի վրայ:

Սահակ կաթողիկոսը սասափիկ վշտացաւ նրանց այդ անմիտ որոշումից, մանաւանդ նրա համար, որ խնդրելու էին պարսիկ կտոսավարիչ նշանակել: Զէ՞ որ պարսից ուղածն էլ հէնց այդ էր, չէ՞ որ դա նշանակում էր, կամովին վերջ տալ երկրի անկախութեանը և Հայաստանը յանձնել մի կատաղի կառավարութեան, որ ով գիտէ ինչեր էր խորհում անելու թշւառ ժողովրդի զիմին:

Վշտացաւ ծերունի կրօնաւորը նրանց այդ ազգագրաւ որոշումից և ասաց.

— Ասաւած չանէ, որ իմ հօտի մոլորւած, հիւանդ ոչխարին փոխեմ օտարի առողջ գաղանի հետ:

Սակայն ոչ իրատ, ոչ էլ պաղատամբ և արտասուք չըկարողացան համոզել Արտաշէսի դէմ զրգուած նախարարներին: Նրանք ոչ միայն երիտասարդ, վչացած իշխանի գահընկեցութիւնը խնդրեցին Վուամից, այլ և հրաժարեցնել տւին Սահակ կաթողիկոսին էլ և փոխարէնը հայրապետական աթոռի վրայ նշանակել առաջարկեցին Արծէկ գիւղացի Սուրմակ անունով քահանային:

Այդ ամենը կատարեցին նրանք ստոր միշտոցներով և գծուծ զրպարտութիւնների պատճառանքներով, որպէս թէ, Արտաշէսն ու Սահակը յոյների հետ միացած՝ տղում էին պարսիկների դէմ ապատամբել:

Կաթողիկոսի բողոքն ու արդարացումը չաղեց: Վուամը զրկեց Արտաշէսին գահից, Սահակ Պարթևին կաթողիկոսութիւնից, կանչեց ու պահեց նրանց Պարսկաստան, և Հայաստան ուղարկեց մի պարսիկ մարզպան (կուսակալ), կաթողիկոսութիւնը յանձնելով Սուրմակին:

Վերջացել էր: Արշակունեաց իշխանութեան անկումն էր, որ տեղի էր ունենում 428 թւին, և Հայաստանի այդ պլաստը, մեծ մասը մանում էր պարսից իշխանութեան տակ, դասնալով պարսկական մի նահանգ:

Այդպէս էր վերջանում Հայաստանի անկախութիւնը, և նա ստրկական օղը վզին՝ դասնում

էր բաժին երկու աէրութիւնների:

7.

Այլիս Հայաստանը գարձաւ ոտնակոխ երկու տիրապետող կառավարութիւնների, որոնք իրենց գործականներով ու զօրքով լցրին երկիրը, քիչ-քիչ հաստատեցան այնտեղ և հարստահարութիւնների ձեռնարկեցին:

Սուրմակը, որ բոնել էր Սահակ կաթողիկոսի գահը, հազիւ կարողացաւ մի տարի զիմանալ հայ նախարարների և մեծամեծների նախատական վարմունքին և կրօնաւորութեան անհնագանդ արհամարհանքին: Ստիպւած եղաւ զիմել Վուամին և խնդրել, որ ազատ թողնի իրեն՝ հեռանալու: Պարսից թոգաւորը նրա տեղ նշանակեց Բրքիշոյ անունով մի տարու: Այնքան վատ կեանք և անարժան վարմունք ցոյց տւաւայու նոր կրօնապետը, որ նախարարները ստիպւեցին ժողով կազմել և մտածել, թէ ինչ պէտք էր անել: Ժողովի մէջ ձայները բաժանեցին, ոմանք առաջարկում էին խնդրել Վուամից՝ գարձեալ Սահակ կաթողիկոսին բերելու, իսկ ոմանք առաջարկեցին պարսից թագաւորից նոր կաթողիկոս ուզել:

Եւ ահա, երկու կողմից էլ երկու իշխաններ ներկայացան Վուամին: Իսկ կրօնաւորներն

միացան սուրբ Մեսրոպի հետ և իրենց կողմից
պատգամաւոր ուղարկեցին մի քահանայի։ Այդ
իսկ միջոցին, յունաց կողմի յոյն կառավարիչ
Անատոլիոս զօրավարը, լսելով որ Սահակին
չուզողներ կան, պատգամաւորութիւն ուղարկեց
Գուամի մօտ և խնդրեց, որ հայոց կաթողիկոսին
ուղարկէ յունաց բաժինը, ուր նրան յօժարու-
թեամբ կընդունէին։

Այս բոլոր պատգամաւորութիւններին Վուամը
պատասխանեց նրանով, որ կաթողիկոս նշանակեց
պաշտօնապէս Շմուէլ ասորուն, հսկելու մարզպ-
անի հետ դատաստանական և հարկային գոր-
ծերի վրայ, իսկ Սահակ Պարթևին արձակեց,
որ իր վիճակը գնայ և իշխանութիւն ունենայ-
միայն վարդապետելու, այլ և ձեռնադրութիւն-
ներ անելու Շմուէլի հրամանով։

Պարսկաստանից մեկնելուց առաջ, Սահակ
կաթողիկոսը կարողացաւ իր համարձակ խօս-
քերով և համոզողական փաստերով Վուամ թա-
գաւորի սիրաը առնել։ Ծերունին դուր եկաւ
նրան, պարսիկ ինքնակալը կամեցաւ փարձա-
տրել, կաթողիկոսը օգտաեց այդ հանգամանքից
և խնդրեց վերաբարձնել նախարարների արտօ-
նութիւնները և Արշակունիներին խնամի դար-
ձած իշխանների կալւածները։

Խնդիրը կատարւած, թէե փառքով Հայաս-
տան վերադարձաւ Սահակ Պարթևը, բայց ա-

ռանձնացաւ Բագրեանդի Սուրբ Յովհաննէս
վանքը և չուզեց այլևս երբէք ընդունել առա-
ջարկւած պաշտօնները, Մինչև իսկ կաթողիկո-
սութեան աթոռն էլ մերժեց այն ժամանակ.
Երբ 15 տարի յետոյ մեռնում էր Շմուէլը
գահը մնում էր թափուր։

Այդպէս առանձնացած և խոր ծերութեան
մէջ էր, որ Լուսաւորչի սերնդի այդ փայլուն
վերջին ներկայացուցիչը խոր հետքեր թողնելով
հայ ազգի պատմութեան և մանաւանդ նրա
մտաւոր կեանքի վերածնութեան մէջ, 440
թւին, սեպտեմբերի 7-ին, մեռաւ Բագրեանդի
Բլուր գիւղում։



Թաղեցին Սահակ Պարթևին Մամիկոննեան-
ների Աշտիշատ գիւղում (Տարօն) և վրան շի-
նեցին մի եկեղեցի։

Իր ուսուցիչ և ընկեր՝ պատւական ծե-
րունու մահւանից յետոյ, երկար չալրեց նաև
սուրբ Մեսրոպը։ Վեց ամսից յետոյ, մեռաւ
հայկական այբուբենը կազմողն էլ, հայ գրա-
կանութեան առաջին այդ առաքեալը, որ մինչև
իր կեանքի վերջը մնացել էր եռանդուն գոր-
ծիչ և ազնիւ մարդ։

Թաղեցին նրան Օշական գիւղում։ Գերեզ-
մանի վրայ երախտագէտ ժողովուրդը կանգնեց-
րեց մի եկեղեցի, որ մինչև այժմ կանգուն է
և յատուկ ուշագրութեան առարկայ իւրաքան-

շիւր հայի համար:

Այդպէս էր ահա, որ ապրեցին ու մեռան
հինգերորդ դարի երկու ամենափայլուն դէմ-
քերը—հայ տառերի և հայ հին գրական լեզուի
ու գրականութեան մեծ առաքեալները:



ՀՅ Ազգային գրադարան



NL0585452

